

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Չակընդդեմ հայցի հարուցման հիմքերն ու դատավարական կարգը և այն չհարուցելու իրավական հետևանքները:

Դաս 2

Այս դասի (մոտիվացնող ներածական տեսանյութ+դասի տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար անհրաժեշտ է **240 րոպե / 4 ժամ:**

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Չասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռաուսուցման բաժնում):



Մինչև 5 րոպե

Գործը դատաքննության նախապատրաստելու փուլին վերաբերող նախորդ շարադրանքում ուսումնասիրված պահանջների համատեքստում էական նշանակություն ունի նաև հակընդդեմ հայցի ինստիտուտը և հակընդդեմ հայցի վերաբերյալ իրավակարգավորումներում սկզբունքային փոփոխությունների լուսաբանումը:

Չակընդդեմ հայցը սկզբնական հայցից պաշտպանվելու նպատակով և սկզբնական հայցի հետ նույն վարույթում քննելու համար պատասխանողի կողմից սկզբնական հայցվորին ներկայացվող նյութաիրավական պահանջ է: Այն հնարավորություն է տալիս միևնույն դատավարության ընթացքում նվազագույն ուժերի ու միջոցների կիրառմամբ լուծել կողմերի փոխադարձ պահանջները և կանխել միմյանց հետ կապված վեճերով հակասական դատական ակտերի կայացումը:

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք ի ն ք ն ա ս տ ու լ գ ի չ հարցերին:



Մինչև 180 րոպե

Սահմանադրական դատարանը 23.06.2016թ. թիվ ՍԴՈ-1289 որոշմամբ արձանագրել է, որ հանդիսանալով պատասխանողի շահերի պաշտպանության դատավարական միջոց՝ հակընդդեմ հայցը նպատակ է հետապնդում նպաստելու պատասխանողի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացմանը և ապահովելու արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը հանդիսացող ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացումը:

Հակընդդեմ հայցը, որպես հայցի դեմ պատասխանողի պաշտպանության դատավարական միջոց, ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են սկզբնական հայցի համեմատ դրա հակընդդեմ բնույթով: Մասնավորապես.

1. հակընդդեմ հայցը կարող է հարուցվել սկզբնական հայցով արդեն իսկ ծագած հայցային վարույթի շրջանակներում,
2. հակընդդեմ հայցը հարուցվում է սկզբնական հայցի հետ նույն վարույթում քննելու համար, որպեսզի պատասխանողի պահանջը ճանաչվի հակընդդեմ և ընդունվի վարույթ, այն պետք է որոշակիորեն կապված լինի սկզբնական հայցի հետ: Այդ կապի բնույթը կանխորոշվում է ԶԴՕ 140-րդ հոդվածի 3-րդ մասով, որը սահմանում է հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու հիմքերը:

Հակընդդեմ հայցի՝ արդեն իսկ սկզբնական վարույթում հարուցվելու հանգամանքը և հակընդդեմ հայցի՝ գործի ողջամիտ ժամկետում, լրիվ և օբյեկտիվ քննությանն ուղղված լինելու նպատակը ենթադրում են սկզբնական հայցով սկսված վարույթում հակընդդեմ հայցի ներկայացման որոշակի ժամկետային սահմանափակման անհրաժեշտությունը: Չնայած դրան, ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 96-րդ հոդվածի

1-ին մասը պատասխանողին իրավունք էր վերապահում հակընդդեմ հայց հարուցել մինչև գործով վճիռ կայացնելը: Այլ կերպ ասած՝ նման կարգավորումը ենթադրում էր հակընդդեմ հայց հարուցելու իրավունքի պահպանում մինչև եզրափակիչ դատական ակտի կայացումը:

Հակընդդեմ հայց հարուցելու իրավունքի ժամկետային սահմանափակման բացակայությունը դատական պրակտիկայում հանգեցնում էր մի շարք խնդիրների և չարաշահումների, մասնավորապես՝ արդեն դատաքննության փուլում հակընդդեմ հայցի ներկայացման միջոցով վարույթի ձգձգման, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման, դատարանի կողմից քաղաքացիական գործի նախապատրաստական փուլին բնորոշ գործողությունների կրկնակի կատարման, ինչպես նաև երբեմն պատասխանողի համար հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքի չարաշահման գործիք էր: Թիվ ԱՐԱԴ/1035/02/08 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ դեռևս նախկին քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված՝ մինչև վճիռ կայացնելու պահը հակընդդեմ հայց հարուցելու իրավունքի առկայության պայմաններում կարևոր արձանագրում է կատարել Վճռաբեկ դատարանը՝ փաստելով հետևյալը. «Չոիրաբ Թովմասյանը հայցը վարույթ ընդունելու պահից ունեցել է բավարար ժամանակ հակընդդեմ հայց ներկայացնելու համար, ավելին՝ 25.03.2010 թվականին նրա կողմից ներկայացվել է պատասխան հայցադիմումի լրացման վերաբերյալ և տվյալ ժամակահատվածում Չոիրաբ Թովմասյանը նույնպես հակընդդեմ հայց չի ներկայացրել: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Չոիրաբ Թովմասյանը չի հիմնավորել մինչև 26.03.2010 թվականը հակընդդեմ հայց ներկայացնելու անհնարիությունը, հետևաբար Դատարանի կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու



համար ժամկետ տրամադրելու մասին միջնորդության մերժումը իրավաչափ է :

ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգիրքը հրաժարվեց հակընդդեմ հայց ներկայացնելու գրեթե անսահմանափակ հնարավորություն ամրագրելու մոտեցումից և պատասխանողին հնարավորություն ընձեռեց, որպես ընդհանուր կանոն, հակընդդեմ հայց ներկայացնել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու վերաբերյալ որոշման կայացումը: Այս իրավանորմը հակընդդեմ հայցին վերաբերող կարգավորումներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի սկզբունքային փոփոխություններից է, որը, ի թիվս այլ տնօրինչական գործողություններ կատարելու ժամանակային սահմանափակումների, կոչված է ապահովելու փաստական նյութի (ներառյալ կողմերի փոխադարձ պահանջների) կենտրոնացումը նախապատրաստական վարույթի սկզբնական փուլերում՝ անհրաժեշտ հիմքեր ստեղծելով գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակն ուրվագծելու և հետագա նախապատրաստական գործողությունները պլանավորելու համար:

Ինչպես սկզբնական, այնպես էլ հակընդդեմ հայցի ներկայացումը դատարանի կողմից ենթադրում է գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված՝ օրենսդրությամբ սահմանված որոշակի գործողությունների կատարում: Ներկայացված հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու հետևանքով սկզբնական հայցով հարուցված վարույթը էապես բարդանում է, քանի որ դատարանը ստիպված է լինում գործի շրջանակներում քննել երկու ինքնուրույն հայցեր (սկզբնականը և հակընդդեմը)՝ պահպանելով դրանցից յուրաքանչյուրի քննության համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով

սահմանված պահանջները, այդ թվում՝ դատաքննության նախապատրաստելուն ուղղված պահանջները և եզրափակիչ դատական ակտին առաջադրվող պահանջները՝ և՛ սկզբնական, և՛ հակընդդեմ հայցերի մասով: Նման պայմաններում գործի ողջամիտ ժամկետում քննության և դատավարության, առավել ևս՝ դատաքննության նախապատրաստական փուլի արդյունավետության ապահովման տեսանկյունից ևս հակընդդեմ հայցի ներկայացման ժամկետային սահմանափակում նախատեսելը կարևոր առաջընթաց քայլ է:

Ուստի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու վերաբերյալ որոշման կայացումը հակընդդեմ հայցի ներկայացման ժամկետային սահմանափակումը.

1. Էականորեն բարձրացնում է դատավարության նախապատրաստության փուլի արդյունավետությունը, դատավարության ընթացքի կանխատեսելիությունը և կանոնակարգվածությունը՝ հնարավորություն ընձեռելով դատավարության այս փուլում հնարավորինս ապահովել վարույթի հետագա անխափան ընթացքը և գրեթե սպառիչ ձևակերպել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի շրջանակը.
2. կանխում է դատավարության առավել ուշ փուլում պատասխանողի կողմից հակընդդեմ հայցի ներկայացման միջոցով իրավունքի չարաշահման և գործի անհարկի ձգձգման հնարավորությունը.
3. նպաստում է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովմանը:

Իրավունքների և օրինական շահերի պաշտպանության դատավարական միջոցի իր դերը կատարելու համար ցանկացած հայց, այդ թվում՝ հակընդդեմ հայցը, դատարան պետք է ներկայացվի

օրենքով խստորեն սահմանված դատավարական կարգով: ԶԴՕ 140-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հակընդդեմ հայցը ներկայացվում է, վարույթ է ընդունվում, ընդունումը մերժվում կամ վերադարձվում է հայցադիմումին վերաբերող սույն օրենսգրքով նախատեսված կարգով: Ըստ այդմ, հակընդդեմ հայց հարուցելու ընդհանուր պայմանները հանգում են նրան, որ հակընդդեմ հայցը ներկայացնելու պահին պետք է առկա լինեն հայցի հիման վրա վարույթ հարուցելու օրենքով կանխորոշված պայմանները, այն է՝ դատարան դիմողը պետք է ունենա տվյալ պահանջով դատարան դիմելու իրավունք (այսինքն՝ բացակայեն հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը), և պահպանված լինի հայցով դատարան դիմելու իրավունքի իրականացման ընդհանուր կարգը (այսինքն՝ բացակայեն հայցադիմումը վերադարձնելու հիմքերը):

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ հակընդդեմ հայցը հարուցվում է արդեն իսկ ծագած հայցային վարույթի շրջանակներում, սկզբնական հայցի հետ նույն վարույթում քննելու համար, ինչպես նաև նկատի ունենալով հակընդդեմ հայցի՝ որպես հայցի դեմ պատասխանողի պաշտպանության միջոցի առանձնահատկությունները, օրենսդիրը դրա նկատմամբ սահմանում է նաև հատուկ պահանջներ, որոնք բացահայտում են հակընդդեմ հայցի իրավական բնույթը, արտացոլում են դրա բովանդակային կողմը՝ պատասխանելով այն հարցին, թե ինչու է տվյալ գործով ներկայացված հայցը հանդիսանում հակընդդեմ: ԶԴՕ 140-րդ հոդվածի 3-րդ մասը ամրագրում է սկզբնական և հակընդդեմ հայցերի փոխադարձ կապը որոշելու իրավապայմանները և սահմանում է, որ հակընդդեմ հայցն ընդունվում է վարույթ, եթե՝

1. հակընդդեմ պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը.

2. հակընդդեմ հայցի բավարարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառում է սկզբնական հայցի բավարարումը.
3. հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործի առավել արագ և արդյունավետ լուծումը:

Հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու առաջին իրավապայմանը հակընդդեմ պահանջի՝ սկզբնական պահանջի հաշվանցմանն ուղղված լինելն է: Այս նորմի շրջանակներում ներկայացվող նյութաիրավական պահանջը պետք է համապատասխանի նյութական օրենսդրությամբ սահմանված պահանջներին, որոնք ամրագրված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 426-րդ հոդվածում: Վերջինիս սահմանում է. «Պարտավորությունը լրիվ կամ մասնակիորեն դադարում է միատեսակ հանդիպական այն պահանջի հաշվանցով, որի ժամկետը լրացել է կամ նշված չէ, կամ որոշված է պահանջի պահով»: Հետևաբար, հաշվանց կատարելու պայմաններն են.

1. հաշվանցվող պահանջների միատեսակությունը,
2. հաշվանցվող պահանջների հանդիպական բնույթը,
3. պարտավորությունները կատարելու ժամկետների լրացած լինելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կատարման ժամկետը նշված չէ, կամ որոշված է պահանջի պահով:

ՀՀ օրենսդրությունը չի սահմանում հաշվանցվող պահանջների միատեսակությունը որոշելու կանոններ: Այս առումով հստակ չափանիշներ չեն ձևավորվել նաև դատական պրակտիկայում: Այնուամենայնիվ, թիվ ԵԱԴԴ/0197/02/08 քաղաքացիական գործով 06.11.2009թ. որոշմամբ Վճռաբեկ դատարանը, օրինակ, արձանագրել է, որ բնակարանի 1/2-րդ բաժնի նկատմամբ սեփականության

իրավունքը ճանաչելու մասին պահանջը և հակընդդեմ հայցով գումար բռնագանձելու պահանջը իրենցից միատեսակ պահանջներ չեն:

Ընդհանուր առմամբ, հաշվանցվող պահանջները համարվում են միատեսակ, եթե դրանց առարկան տեսակային հատկանիշներով որոշվող նույնատիպ գույք է, ներառյալ՝ դրամական միջոցներ: Ընդ որում, սկզբնական և հակընդդեմ հայցով պահանջների գնահատման ենթակա լինելու հանգամանքը դեռևս բավարար չէ սկզբնական և հակընդդեմ պահանջները միատեսակ համարելու համար: «Միատեսակ» բառն օգտագործելով, օրենսդիրը նպատակ է հետապնդել ոչ թե ցույց տալու, որ սկզբնական և հակընդդեմ պահանջները պետք է ունենան գույքային բնույթ (ենթակա լինեն գնահատման), այլ այն, որ դրանց առարկան պետք է լինի նույնատիպ, պահանջը պետք է ուղղված լինի այն ներկայացնողի օգտին նույնատիպ բարիքներ վճռելուն:

Սկզբնական հայցի հաշվանցմանն ուղղված հակընդդեմ հայց ներկայացնելը, սակայն, չի կարող մեկնաբանվել որպես սկզբնական հայցի կամ դրա հիմքում ընկած փաստերի ընդունում: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ պատասխանողը սկզբնական պահանջի հաշվանցմանն ուղղված հակընդդեմ հայցով չի կարող ուղղակիորեն ընդունել սկզբնական հայցը կամ դրա հիմքում ընկած փաստերը: Հայցի ընդունումը, դրա հիմքում ընկած փաստերի ընդունումը ինքնուրույն տնօրինչական նշանակություն ունեցող գործողություններ են, որոնցից յուրաքանչյուրն ունի իր դատավարական հետևանքները, սակայն եթե հայցադիմումի պատասխանի կամ հակընդդեմ հայցի շրջանակներում սկզբնական հայցով պատասխանողը նման դատավարական գործողություններ չի կատարում, դրանց իրավական հետևանքներն առաջանալ չեն կարող:

Չակընդդեմ հայցը վարույթ ընդունելու երկրորդ՝ սկզբնական հայցի հետ վերջինիս փոխադարձ կապին վերաբերող իրավապայմանի հիմքում ընկած է այն իրավահարաբերությունների միասեռությունը, որոնցից բխում են տվյալ հայցերը: Ընդ որում, այս պայմանի առկայության մասին կարելի է խոսել հետևյալ երեք հատկանիշների միաժամանակյա առկայության դեպքում.

1. առկա է փոխադարձ կապ սկզբնական և հակընդդեմ հայցերի միջև,
2. սկզբնական և հակընդդեմ հայցերի համատեղ քննությունը կարող է ապահովել վեճի ավելի արագ լուծում, քան դրանց առանձին-առանձին քննությունը,
3. սկզբնական և հակընդդեմ հայցերի համատեղ քննությունը կարող է ապահովել վեճերի ավելի ճիշտ լուծում, քան դրանց առանձին-առանձին քննության դեպքում:

Սկզբնական և հակընդդեմ հայցերի միջև փոխադարձ կապի առկայության մասին կարելի է խոսել բոլոր այն դեպքերում, երբ սկզբնական և հակընդդեմ պահանջները բխում են միևնույն իրավահարաբերություններից, ինչպես նաև այն դեպքերում, երբ բխում են համասեռ իրավահարաբերություններից, որոնց հիմքում առկա են նաև նույնական իրավաբանական փաստեր:

Չակընդդեմ հայցը սկզբնական հայցի հետ քննելու համար վարույթ ընդունելու վերջին՝ հակընդդեմ հայցի՝ սկզբնական հայցի բավարարումը լրիվ կամ մասնակի բացառելու իրավապայմանի հիմքում դրված է հայցերի հիմքերի միջև առկա կապը: Ի տարբերություն սկզբնական պահանջի հաշվանցմանն ուղղված հակընդդեմ հայցի, որի նպատակն առավելապես սկզբնական հայցի բավարարման անբարենպաստ հետևանքները մեղմացնելն է, քննարկվող տեսակի հակընդդեմ հայցը հարուցվում է սկզբնական

հայցը հերքելու, դրա հիմքերը «փյուզելու» նպատակով: Դատավարագիտության մեջ համընդհանուր ճանաչում է գտել այն, որ հակընդդեմ հայցի բավարարումը կարող է հանգեցնել սկզբնական հայցը լրիվ կամ մասնակի մերժելուն հետևյալ դեպքերում.

1. ակընդդեմ հայցով ներկայացված պահանջը հերքում, «վերացնում» է սկզբնական հայցի հիմքը.
2. հակընդդեմ պահանջը բացառում է սկզբնականը՝ դրանց անհամատեղելիության պատճառով:

Հակընդդեմ հայցը, անկախ սկզբնական հայցի հետ վերջինիս ունեցած առնչության բնույթից, պատասխանողին վերապահված դատական պաշտպանության միջոց է և ենթակա է իրացման տնօրինչականության սկզբունքի տրամաբանության շրջանակներում: Այլ կերպ ասած՝ հակընդդեմ հայց հարուցելու իրավունքի իրականացումը կամ դրա իրականացումից հրաժարումը բացառապես պատասխանողի հայեցողության տիրույթում է: Նախկին քաղաքացիական դատավարության օրենսգիրքը որևէ կերպ չէր անդրադառնում հակընդդեմ հայցի իրավունքը չիրականացնելու հետևանքներին, ինչը հիմք էր տալիս փաստելու, որ հակընդդեմ հայցը բոլոր դեպքերում կարող է քննվել ինչպես սկզբնական հայցի հետ, այնպես էլ առանձին վարույթում:

Այս համատեքստում քաղաքացիադատավարական նոր օրենսդրության ամենակարևոր նորույթներից մեկը կարելի է համարել ԶԴՕ 140-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթը, ըստ որի. «Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված հիմքով հակընդդեմ հայց չներկայացնելը պատասխանողին զրկում է հետագայում այնպիսի հայց ներկայացնելու հնարավորությունից, որը կարող էր ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառել սկզբնական հայցի բավարարումը, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է սույն

հողվածով սահմանված կարգով հակընդդեմ հայց ներկայացնելու անհնարիությունը՝ իրենից անկախ պատճառներով» : Այսպիսով, օրենսդրորեն նախատեսվել է այս խումբ հակընդդեմ հայցը չներկայացնելու իրավական հետևանքը՝ այն հետագայում առանձին վարույթով ներկայացնելու արգելքի ձևով՝ այսպիսով բացասական հետևանքների կիրառման հեռանկարով խթանելով առանձին խումբ հայցերի հարուցումը՝ սկզբնական հայցի հարուցումից հետո սահմանելով դրանց քննության հնարավորությունն բացառապես հակընդդեմ հայցի կարգավիճակում: Այստեղից էլ բխեցվում է հայրենական դատավարագիտության համար նոր՝ «պարտադիր» հակընդդեմ հայց պայմանական եզրույթը:

«Պարտադիր» հակընդդեմ հայցի օրենսդրական ամրագրումը պայմանավորված էր իրավակիրառ պրակտիկայից եկող մի շարք ազդակներին դատավարագիտական մի շարք հիմնադրույթներին համարժեք արձագանքելու անհրաժեշտությամբ: Նախկին քաղաքացիական դատավարության օրենսգրքի հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկայում քիչ չէին դեպքերը, երբ պատասխանողները, ունենալով սկզբնական հայցի հիմքում դրված հանգամանքները հակընդդեմ հայցով չեզոքացնելու հնարավորություն, տարբեր պատճառներով ձեռնպահ են մնացել հակընդդեմ հայցի հարուցումից, իսկ դատարանն էլ իր հերթին, սահմանափակված լինելով տնօրինչականության սկզբունքով, առանց համապատասխան պահանջի չի ճանաչել դրանց անվավերությունը կամ այլ կերպ դադարեցրել իրավական գործողությունը: Միևնույն ժամանակ նույն այդ պատասխանողները դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո ձեռնամուխ են եղել իրենց դեմ կայացված դատական ակտերի հիմքում դրված հանգամանքների չեղարկման (օրինակ՝ գումարի բռնագանձման մասին

վճռի հիմքում դրված գործարքի վիճարկման և այլն)՝ պահանջներով հայցերի հարուցմանը և բարենպաստ դատական ակտի դեպքում արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայմանը¹:

«Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի ներդրումը Հայաստանի Հանրապետության կոչված է ապահովելու իրավական որոշակիության, *res judicata*, դատավարական ինստիտուտի և կոնցենտրացիայի, դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքների, դատական ակտերի նախատեսելիության հատկանիշի, ինչպես նաև ընդհանուր առմամբ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կենսագործումը:

ՔԴՕ 140-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը, սակայն, ամենևին չի նշանակում, որ հակընդդեմ հայց հարուցելու իրավունքն օրենքով նախատեսված դեպքերում վերածվում է պարտականության, քանի որ դա կհակասեր դատական պաշտպանության միջոցները և դատավարական իրավունքները սեփական հայեցողությամբ իրականացնելու տնօրինչականության սկզբունքով երաշխավորված հնարավորությանը: Միևնույն ժամանակ քննարկվող ինստիտուտին առնչվող կարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ պատասխանողի դեմ սկզբնական հայցի հարուցման փաստով տեղի է ունենում պատասխանողի հայց հարուցելու իրավունքի փոխակերպում հակընդդեմ հայց հարուցելու իրավունքի:

¹ *Տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի թիվ 3-1615 (Ա) քաղաքացիական գործով 12.12.2007թ., թիվ 3-248 (ՎԴ) քաղաքացիական գործով 10.09.2010թ., թիվ ԳԴ1/0144/02/10 քաղաքացիական գործով 23.03.2012թ., թիվ ԼԴ4/0201/02/10 քաղաքացիական գործով 18.07.2014թ., թիվ ԵՄԴ/0563/02/12 քաղաքացիական գործով 30.04.2015թ. և թիվ ԳԴ4/0240/02/13 քաղաքացիական գործով 22.07.2016թ. որոշումները):*

Այսինքն՝ տվյալ դեպքում, որպես կանոն, պատասխանողի համապատասխան իրավունքների և օրինական շահերի հնարավոր պաշտպանությունն միջոց է դառնում միայն հակընդդեմ հայցը, որը սահմանված կարգով չիրականացվելու դեպքում դիտարկվում է դատավարական անգործությամբ (լուռությամբ) տնօրինված և հանգեցնում է պատասխանողի հայցի իրավունքի դատավարական կողմի, այսինքն՝ հայց հարուցելու իրավունքի դադարման:

«Պարտադիր» հակընդդեմ հայցի կանոնի արդյունավետ և իրավաչափ իրացումը, առնվազն նորմի կիրառման սկզբնական շրջանում, պահանջում է որոշակի առումով դատարանի ակտիվ դերակատարություն՝ «ի պաշտոնե» օգտակար միջամտության ձևով, որի անհրաժեշտ իրավական հիմքն ամրագրված է ՔԴՕ 13-րդ հոդվածի 2 թվ մասում² : Մասնավորապես, այն ենթադրում է դատարանի կողմից ՔԴՕ 148-րդ հոդվածի շրջանակներում «պարտադիր» հակընդդեմ հայցի ներկայացման իրավունքի և դրա չիրականացման հետևանքների պարզաբանում, քանի որ կանոնի նախատեսման և հետագա կիրառման հիմնաքարը պատասխանողի կողմից իր իրավունքից գիտակցված հրաժարումն է: Այս համատեքստում կարևոր է նաև այն, որ ՔԴՕ-ն «պարտադիր» հակընդդեմ հայցին վերաբերող իրավանորմումնախատեսում է պատասխանողի իրավունքների պաշտպանության ևս մեկ երաշխիք: Մասնավորապես,

² Ի տարբերություն նախկին օրենսդրության, գործող ՔԴՕ-ն էապես կարևորել է դատարանի ակտիվ դերը կողմերի մրցակցությունը կազմակերպելու հարցում՝ մրցակցության սկզբունքին նվիրված 13-րդ հոդվածում ամրագրելով կանոն առ այն, որ դատարանը, պահպանելով անկախություն և անաչառություն, պարտավոր է ոչ միայն «վարել» դատավարությունը, այլ նաև անհրաժեշտության դեպքում գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձանց պարզաբանել նրանց իրավունքները և պարտականությունները, նախազգուշացնել դատավարական գործողությունները կատարելու կամ չկատարելու հետևանքների մասին, պայմաններ ստեղծել գործի փաստական հանգամանքները պարզելու, ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու համար:

այն բացառիկ դեպքերում, երբ հակընդդեմ հայց հարուցելու իրավունքի չիրականացումը եղել է ոչ թե պատասխանողի կամահայտնության, այլ օբյեկտիվ բնույթ ունեցող խոչընդոտների հետևանք, հետագայում հայց հարուցելու արգելքն ինքնին կիրառելի չէ, և պատասխանողը կարող է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը ձեռնամուխ լինել առանձին հայցի հարուցման միջոցով:

«Պարտադիր» հակընդդեմ հայցի օրենսդրական ամրագրման համատեքստում ԲԴՕ-ն 140-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի խախտումն օրենսդիրը հիմք է դիտում առանձին վարույթով ներկայացված հայցի ընդունումը մերժելու (ԲԴՕ 126-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ), իսկ այս հանգամանքը վարույթի հետագա ընթացքում պարզվելու դեպքում՝ քաղաքացիական գործի վարույթը կարճելու համար (ԲԴՕ 182 րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ):

Այսպիսով, «պարտադիր» հակընդդեմ հայցի օրենսդրական ամրագրմամբ նախատեսվել է հակընդդեմ հայց չներկայացնելու հետևանքը՝ այն հետագայում առանձին վարույթով ներկայացնելու արգելքի ձևով: Այնուամենայնիվ, հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու մյուս երկու՝ սկզբնական հայցի հաշվանցմանն ուղղված լինելու և երկու հայցերի միջև առկա փոխադարձ կապի հիմքով ներկայացված լինելու դեպքում պատասխանողը շարունակում է պահպանել իր պահանջն ինչպես հակընդդեմ, այնպես էլ առանձին հայցով ներկայացնելու, այսպես կոչված, անսահմանափակ ազատությունը:

Մինչ գործող ԲԴՕ ընդունու մը հակընդդեմ հայցի վերաբերյալ իրավակարգավորումների պայմաններում վիճելի էր հակընդդեմ հայցի վարույթ ընդունումը հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու իրավապայմանների

բացակայությամբ մերժելու որոշման վերաքննիչ բողոքարկման հնարավորությունը, որի բացակայությունը հիմնավորվում էր տվյալ իրավիճակում պատասխանողի իրավունքների պաշտպանության այլ միջոցի՝ առանձին հայց ներկայացնելու իրավական հնարավորության առկայությամբ: Վիճելի էր նաև հակընդդեմ հայցը հայցադիմումը վերադարձնելու և մերժելու համար սահմանված ընդհանուր հիմքերով վերադարձնելու և մերժելու որոշումների վերաքննիչ բողոքարկման հնարավորության առկայությունը: Զաղաքացիական դատավարության նոր օրենսգրքով լուծում է տրվել նաև այս հարցերին՝ հստակ սահմանելով հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու և վերադարձնելու որոշումների վերաքննիչ բողոքարկման իրավական հնարավորությունը՝ անկախ այդ որոշումների իրավական հիմքից, այդ թվում՝ հակընդդեմ հայցը վերադարձնելու, այն վարույթ ընդունելը մերժելու, ներառյալ՝ հակընդդեմ հայցի վարույթ ընդունելու իրավապայմանի բացակայության հիմքով մերժելու որոշումների բողոքարկման իրավական հնարավորությունը:

Հակընդդեմ հայցին վերաբերող որոշակի առանձնահատուկ և նոր կարգավորումներ են սահմանված նաև ԶԴՕ այլ նորմերում: Այսպես, հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու հանգամանքն արգելք է քաղաքացիական գործի՝ հեռակա դատաքննության, պարզեցված վարույթի և արագացված դատաքննության կանոններով քննության շարունակման համար (համապատասխանաբար, ԶԴՕ 292-րդ հոդվածի 4-րդ մաս, 297-րդ հոդվածի 4-րդ մաս, 306-րդ հոդվածի 1-ին մաս): Որոշակի առանձնահատկություններ են առկա նաև այս վարույթներով հակընդդեմ հայցի ներկայացման ժամկետների առնչությամբ: Մասնավորապես, ի

տարբերությունն հակընդդեմ հայցը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման կայացումը ներկայացնելու վերաբերյալ ընդհանուր կանոնի, պարզեցված վարույթի շրջանակներում հակընդդեմ հայց կարող է ներկայացվել պարզեցված վարույթ կիրառելու մասին դատարանի որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում (ՔԴՕ 299-րդ հոդվածի 2-րդ մաս), իսկ արագացված դատաքննության կիրառման դեպքում՝ մինչև առաջին ատյանի դատարանի կողմից եզրափակիչ դատական ակտ կայացնելը (ՔԴՕ 304-րդ հոդվածի 3-րդ մաս):

Չակընդդեմ հայցին վերաբերող իրավակարգավորումներում առանցքային փոփոխությունն է նաև գործի նոր քննության ժամանակ հակընդդեմ հայց ներկայացնելու արգելքի վերաբերյալ իրավա կարգավորումը (ՔԴՕ 413-րդ հոդվածի 2 րդ մաս):

1. Մեղրյան Ա.Գ., Մարկոսյան Տ.Ա., Գեղամյան Է.Կ., «Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի իրավական բնույթը և գոյաբանական հիմքերը քաղաքացիական դատավարությունում, «Արդարադատություն» պարբերական, 2020 2 (51) (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://ardaradatutyunjournals.com/wp-content/uploads/2020/05/51-2020-2-1.pdf>):
2. [Սահմանադրական դատարանի 23.06.2016 թվականի թիվ ՍԴՈ-1289 որոշումը:](#)
3. [Սահմանադրական դատարանի 18.10.2016 թվականի թիվ ՍԴՈ-1315 որոշումը:](#)
4. [Սահմանադրական դատարանի 18.06.2019 թվականի թիվ ՍԴՈ-1464 որոշումը:](#)
5. [Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/1035/02/08 քաղաքացիական գործով 27.12.2010թ. որոշումը:](#)



Լրացուցիչ մեդիա-նյութերը նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար: